ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Ս. Հ. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Հայաստանի երբեմնի քաղաքամայր Վաղարշապատը գտնվում է Արարատյան նահանգի Արագածոտն գավառում, իսկ Արարատյան նահանգը՝ Հայաստանի «միջնաշխարհն»[1] է, «գլուխ աշխարհիս Հայոց»[2]։ Վաղարշապատը հայ Արշակունիների պետականության թագավորանիստ քաղաքն էր, որը գարեր շարունակ եղել է Հայաստանի քաղաքական, կրոնական և մշակութային կենտրոնը։

Հնագիտական նյութերը և մատենագրական աղբյուրները օգնում են մեզ վերականգնելու հին Վաղարշապատի տեղագրությունը։

Մ. Խորենացու հիշատակած ավանդություններից հայտնի է, որ Վաղարշապատի հին քաղաքատեղին գտնվում էր Արարատյան գաշտում՝ Քասախ գետի և Շրեշ բլրի մոտ, իբրև ամրացված բերդ, առևտրական մեծ ավան (բնակավայր)[3]։

Ե. Լալայանի վկայությամբ, ժողովուրդը Շրեշ է անվանել Ղուդոյի կոնդ կոչված բլուրը, որը գտնվում էր Վաղարշապատից հյուսիս-արևելք (քաղաքից 500 մ հեռու), Էջմիածին—Օշական ճանապարհի աջ կողմում։ Շրեշ բլուրը մինչև 1870-ական թվականները 123 մ տրամագծով, մի քանի մետր բարձրությամբ (նոր քարի, պղնձի, բրոնզի և երկաթի դարերի շերտերով), խոշոր զանգվածային քարերով շրջապատված արհեստական հողաբլուր էր, որը 1913, 1928 թթ. պեղել է Ե. Լալայանը[4], իսկ 1945—1950 թթ. պեղվել է մեր կողմից[5]։ 1950 թ. բլուրը ամբողջովին հարթվել է։

Վաղարշապատի տեղադրությունը կապված է նաև Քասախ գետի հետ, որը շատ անգամներ է փոխել իր հունը։ Հնում այն հոսել է Վաղարշապատ քաղաքի հյուսիսային կողմից, Շրեշ բլրի և Կավաբլրի մոտից թեքվել է դեպի արևմուտք, ուր պահպանվել են գետի ցամաքած հունը և միջնադարյան (XVI դ.) կամրջի մնացորդները։ Քասախի մի բազուկը քաղաքի արևմուտքով իջել է հարավ և Վ. Խաթունարխի արևմուտքում՝ Էջմիածնից Իգդիր տանող խճուղուց ներքև միացել Մեծամոր գետին։ Այս բազուկը պահպանվում էր մինչև 1833 թվականը[6]։

---

1 «Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 163, 164։

2 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1907, էջ 23։

3 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 198։

4 Ե. Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 61։

5 Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 191—193։

6 Ա. Մխիթարյան, Վաղարշապատ, քաղաքամայր Հայաստանի, հ. Ա, Վաղարշապատ, 1874, էջ 41—42։

Քասախ գետի առաջին հունի երկրորդ բազուկը անցնում էր ներկայիս Ա.Թարրեկյան գյուղի արևելյան կողմով, ապա թեքվելով դեպի հարավ-արևմուտք՝ իջնում Քյոլանլու գյուղից հարավ և Վ. Խաթունարխ գյուղի արևմտյան մասում միանում էր Մեծամոր գետին։

Քասախի առաջին հունը հետագայում քաղաքից հեռացել է դեպի հյուսիս-արևմուտք։ Ներկայումս գետի առաջին հունը Մեծամորի մեջ է թափվում ոչ թե այն վայրում, ուր մինչ V դարն էր թափվում, այլ՝ Վաղարշապատից ավելի հեռու արևմտյան կողմում, որի հետևանքով Քասախը Մեծամորին է խառնվում երկրորդ հունով։ Այս բոլորից հետևում է, որ Վաղարշապատ մայրաքաղաքի սկզբնական տեղը որոշելու համար հիմնական փաստարկներ կարող են ծառայել Քասախ գետը, վերջինիս հին (առաջին) հունի ստորին հոսանքի շուրջը տարածված տոհմա-ցեղային բնակատեղիները և կուրգաններից առաջացած բլրաշարքը։ Կարելի է ենթադրել, որ Վաղարշապատը տարածված է եղել Քասախի հին հունի ներքևի հոսանքի՝ Մեծամոր գետի միացման տեղից 5—6 կմ հյուսիս և Քասախ գետից 1 կմ հարավ։

Քասախ գետի առաջին հունի երկրորդ բազուկի վրա, Աթարբեկյան գյուղից հարավ, պահպանվել է մ. թ. ա. I դ. բնակատեղի և դամբարանադաշտ։

Գետի երկրորդ (ներկայիս) հունը անցել է Գրամփա, Ծաղկունք գյուղերով, իջել Ն. Զեյվա գյուղից 7 կմ հարավ և Ապագա գյուղի հյուսիս-արևմուտքում միացել է Մեծամորին։ Այս երկու հունները մեկտեղ գործել են սկսած նոր քարի և պղնձի դարերից։ Առաջին հունի երկու բազուկները հավանաբար պահպանվել են մինչև XIX դ.[7], իսկ երկրորդ հունը գոյատևում է մինչև այսօր։

Վաղարշապատը Արևելքի մյուս մեծ քաղաքների նման շրջապատված էր պարսպով, որի կենտրոնում շուկան էր։ Քաղաքի մեջ էր առնված նաև միջնաբերդը, ներսում՝ արքունի ապարանքը և մայր տաճարը, իսկ քաղաքի պարիսպներից դուրս քաղաքի մասը կազմող արվարձաններն էին։ Պարիսպների ներսում ապրում էր ազնվականությունը և իշխող դասը, իսկ պարիսպներից դուրս՝ աշխատավորությունը։ Արվարձանները ևս ունեցել են իրենց շուկան և արհեստավորական թաղերը։

Վաղարշապատի պարիսպներից դուրս, հարավային պարսպից ոչ հեռու, Եգդիրի խճուղուց ձախ գտնվել է հին դրամների հավաքածու, իսկ հարավ-արևմտյան մասից մենք հայտնաբերել ենք Սեպտեմիոս Սևեր կայսեր (193—211 թթ.) հռոմեական դրամներ, որոնք վկայում են քաղաքի այդ հատվածի բնակեցվածության մասին։ Քաղաքի արևմտյան պարսպից դուրս, Գայանե վանքի հոգևորականների գերեզմանոցի և Էջմիածնի վանքի պարսպի միջև, հին գյուղի տեղում բացվել են կրաշաղախով պատրաստված շենքի հիմքեր, նշանակում է այստեղ ևս բնակելի է եղել։

Վերջապես, Ագաթանգեղոսի վկայությամբ, Հռիփսիմեն և նրա ընկերուհիները ապրում էին Վաղարշապատի հյուսիս-արևելյան մասում՝ այգեստանների հնձաններում։ «Յայնմ ժամանակի դային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստ թագաւորացն Հայոց։ Այնուհետև եկեալ մտանէին ի հնձանարկս այգեստանուոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսէ...»[8]։

---

7 Նույն տեղում։

8 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 84։

Հռիփսիմեի և մյուս կույսերի նահատակության ավանդության կապակցությամբ մատենագիրները հիշատակում են Վաղարշապատի տարբեր մասերը։

Ըստ Ագաթանգեղոսի՝ Վաղարշապատ քաղաքն ուներ միջնաբերդ դեպի «բերդամեջ» (միջնաբերդ) ձգվող ներքին փողոցներով. «...Կայթիւք վազելով, ցուց բարձեալ մարդկանն. կէսքն ի բերդամիջին, և կէսք զքաղաքամէջն լցին խնճոյիւք»[9]։

Այսպիսով, ըստ Ագաթանգեղոսի, հին Վաղարշապատը շրջապատված էր պարսպով, «քաղաքամիջում» ուներ բերդ (միջնաբերդ), ուր գտնվում էր արքունի ապարանքը և էջմիածնի մայր տաճարը[10]։

Շինարարական աշխատանքի ժամանակ միջնաբերդի և արքունի ապարանքի տեղանքում (թղթի գործարանի մոտ) գտնվել են լուսամուտների և դռան կողերի մասեր, մարմարե և քարե սալահատակներ, իսկ ճեմարանի կողքով դեպի հարավ ձգվող (Արարատյան) փողոցից՝ պալատական շենքերին հատուկ մարմարե կառուցվածքի մնացորդներ։ «Ղազարապատ» հյուրանոցի մոտ բացվել են ներքնատուն (թրծած աղյուսե, կրաշաղախով պատերի հետքեր)[11], իսկ եկեղեցու տպարանի մոտ՝ բաղնիքի շենք։

Հին Վաղարշապատի միջնաբերդի պարիսպները մոտավորապես համընկնում են կաթողիկե եկեղեցու այժմյան պարիսպների և քաղաքային այգու տարածության հետ։ Այս փաստերը ցույց են տալիս այն տեղը, ուր եղել են հին Վաղարշապատի երբեմնի միջնաբերդը և արքունի ապարանքը[12]։

Վաղարշապատ քաղաքի աստիճանական զարգացման մասին վկայություն է պահպանվել Խորենացու մոտ. սա (Վաղարշը) «...սլատեաց պարսպաւ և հզօր աւանն Վարդգէսի... յորում և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք։ Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»[13]։ Այստեղ Վաղարշապատը նախ հիշվում է որպես հնագույն «աւան», ապա՝ «քաղաքագեւղ վաճառօք» և հետո որպես պարսպով ամրացած քաղաք։

Վաղարշապատի հակիրճ նկարագրությունը տալիս է նաև Փարպեցին. «...մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանէօք զանպակասութիւն հացի և գինւոյ, ...բանջարացն և զանազանումն իւղաբուղխ սերմանցն»[14]։ Ապա՝ «...զբարձրաբերձ շինուածս անթիւ ապարանացն, զանյագ, զամենալի դաշտացն զբերկրումն»[15]։ Վերոհիշյալից կարելի է հետևցնել, որ պատմիչի ժամանակ Վաղարշապատում եղել են բազմաթիվ բնակչությամբ բարձրաբերձ մեծաքանակ շենքեր, իսկ քաղաքի շուրջը՝

---

9 Ագաթանգեղոս, էջ 98։

10 Նույն տեղում, էջ 96, 375։

11 Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն հինգ գավառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. 1, էջ 77—81, Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 203—209, Ա. Մխիթարյան, Վաղարշապատ, քաղաքամայր Հայաստանի, էջ 54—61 և 64։

12 Աշխ. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1931, էջ 51—54։

13 Մ. Խորենացի, էջ 199—200։

14 Ղ. Փարպեցի, էջ 20։

15 Նույն տեղում, էջ 24։

ամենալի դաշտեր, որոնք, ամենայն հավանականությամբ, քաղաքի «այգեստաններն» էին, որոնց մասին վկայում է նաև Ագաթանգեղոսը։

Մատենագրական տվյալներից և հնագիտական ուսումնասիրություններից ճշտորոշվում է նաև Վաղարշապատի արևելյան սահմանը, որը համապատասխանում է Ագաթանգեղոսի մոտ հիշատակված Վաղարշապատի գլխավոր պողոտայի ուղղությանը. «...ընթացեալ ընդ քաղաքամէջսն ելանէր ընդ արեւելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին»[16]։

Վաղարշապատի սարսպի երկու տարբեր մասերում էին տեղադրված քաղաքի դռները։ Հին պողոտան մոտավորապես համապատասխանել է ներկայիս Մյասնիկյան փողոցին, իսկ «Արեգ դուռը» գտնվել է Մյասնիկյան ու Սպանդարյան փողոցների հատման տեղում՝ արևելյան դռնից ոչ հեռու։ Արտաշատ գնացող գլխավոր ճանապարհի մոտ՝ քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, հիշվում է նաև Հռիփսիմեի տաճարը. «Ի կողմն մի հիւսիսոյ, ի տեղի մի յարևելս կոյս, ի սարաւանդակ ի բարձրաւանդակ յաւաղին տեղի մի, մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք»[17]։ Այս «բուն» պողոտան այն ճանապարհն է, որը Հռիփսիմեի մոտերքում երկու ճյուղի բաժանվելով, տանում է Երևան և Արտաշատ։ Արեգ դռան կողմում քաղաքը դեպի արևելք չի ընդարձակվել, որովհետև № 2 միջնակարգ դպրոցին չհասած, նրանից արևելք և Զվարթնոցի ու Հռիփսիմեի միջև ընկած ամբողջ տարածությունը եղել է հռոմեական շրջանի դամբարանադաշտ (ավելի քան 1 քառ. կմ հրապարակով), որը տարածվել է նաև Հռիփսիմեից արևմուտք։ Հռիփսիմեի և Շողակաթ վանքերի միջև, № 2 միջնակարգ դպրոցից հյուսիս-արևելք ընկած ամբողջ տարածքում բացվել են հեթանոսական, հռոմեական ժամանակների դամբարաններ, ուր հայտնաբերվել են քարարկղային, կարասային թաղումներ, քարե սարկոֆագներ։ Քաղաքի դամբարանադաշտում գտնվել է Վեսպասիանոս կայսեր 69, 71 թթ. դրամ, իսկ Շողակաթ վանքի և № 2 միջնակարգ դպրոցի հյուսիս-արևելյան մասում բացվել է մ. թ. ա. II հազարամյակի բրոնզեդարյան դամբարան։ Դամբարանադաշտը տարածվում է նաև Արարատ տրեստի և Անասնաթաղ բլրի շրջակայքում։ Այստեղ բացված դամբարանները քարարկղային թաղումներ են, կավե դագաղներով, որոնք բնորոշ են հռոմեական և պարթևական ժամանակներին։ Հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ քաղաքի սահմանը չէր կարող այդտեղ հասած լինել[18]։

Վաղարշապատի տեղադրության և նրա սահմանների որոշման համար կարևոր են նաև էջմիածնի ճեմարանի՝ լսարանի և հանրակացարանի (արևելյան պատի մոտ) շենքերի շրջակայքից (Իգդիրի խճուղուց աջ) հայտնաբերված երկու լատիներեն արձանագրությունները, որոնց տեղում և մանկապարտեզի մոտ, մինչև 1945 թ. պահպանվում էին կավե հաստ պատերի մնացորդներ։ Այդ վայրը, անշուշտ, հին քաղաքի նկատմամբ ունեցել է կենտրոնական դիրք, որտեղ, որպես իրենց զորանիստ, հռոմեացիները կառուցել են ամրություն՝ բերդ։ Արձանագրությունները, հավանաբար, պատկանել են հռոմեացիների կողմից կառուցված քաղաքի պարիսպներին և դրված են եղել հարավային պարսպի դռան վրա։

---

16 Ագաթանգեղոս, էջ 103։

17 Նույն տեղում։

18 Աշխ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 39—41, 52—53, 81—83։

Հին Վաղարշապատը ձգվում էր հյուսիսից հարավ՝ հասնելով Իգդիրի խճուղուն։

Ագաթանգեղոսը Հռիփսիմեի և մյուս կույսերի սպանության առիթով հիշատակում է Վաղարշապատ քաղաքի հարավային դուռը, հարավում գտնվող պողոտան և Մեծամոր գետի կամուրջը, որը կոչվում էր Վաղարշապատի կամ Մեծամորի կամուրջ, որտեղով ճանապարհը տանում էր դեպի Դվին. «... ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային որ հանէր ի Մեծամորի կամուրջն»[19]։ Պատմիչը քաղաքի հարավային կողմում է հիշում նաև Գայանե վանքը. «... ի հարաւակողմ կուսէ անտի, ուր վկայեացն Գայիանէ»[20] կամ «... ի վկայարանին՝ որ ի հարաւակոյս քաղաքին էր՝ պատրաստեաց և զայն տեղին երանելւոյն Գայիանեայ»[21]։

Այստեղից հետևում է, որ Վաղարշապատ մայրաքաղաքի հարավային սահմանը անցնում էր Գայանե վանքի մոտով։ Իսկ քաղաքի դեպի հարավային դուռը (դուռն հարաւոյ) գնացող պողոտան հնում, հավանորեն, սկսվել է միջնաբերդից՝ էջմիածնի մայր տաճարից, ճեմարանի արևմտյան կողմից, ներկայիս Շահումյան և Կամոյի փողոցների հատման տեղից արևմուտք, ուր գտնվել են քաղաքի հարավային պարիսպը և նրա դուռը։ Այդ է վկայում նաև եկեղեցու և ճեմարանի լսարանի միջև վերջին տարիներին բացված փողոցի քարե սալահատակը։

Վաղարշապատի հարավային դռան կողմից, Մեծամոր գետի ուղղությամբ, ձգվում էր մեկ այլ ճանապարհ, որը անցնում էր Մեծամորի կամրջով։ Այդ ճանապարհը իր սկզբնամասում համապատասխանում է Վաղարշապատ—Իգդիր խճուղուն։

Ագաթանգեղոսը հիշատակում է նաև Վաղարշապատի մեծ խրամը և քաղաքի հարավային կողմում գտնվող պարկենփոսը. «... ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճախճախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին որ շուրջ գայր զքաղաքաւն»[22]։

Պարկենփոսը, հավանաբար, Խաթունարխի և էջմիածնի միջև գտնվող Մոխրաբլուրն է, որի վրա այժմ էլ կան հելլենիստական և միջնադարյան ժամանակաշրջանի խաչքարերով (խեցու և ապակե սրվակների մնացորդներով) դամբարաններ։

Խոսրով թագավորի սպանությունը նկարագրելիս Ագաթանգեղոսը նշում է, որ հայ նախարարները հետապնդելով Խոսրովի սպանողներին, մի մասը ցամաքային (Արքունի) ճանապարհով գնում է դեպի Արտաշատ քաղաքի մոտի Տափերական (Արաքսի) կամուրջը, մյուս մասը անցնում է Վաղարշապատի (Մեծամորի) կամրջով «... նախարարք հայկոյտ զօրաքն՝ գունդ գունդ հատանէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի։ ... Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամորի կոչեն՝ աճապարէին հասնել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու։ Ի կիրճս ճանապարհացն արգե-

---

19 Ագաթանգեղոս, էջ 110։
20 Նույն տեղում, էջ 385։
21 Նույն տեղում, էջ 389։
22 Նույն տեղում, էջ 110։

լին ղնոսա, ի մէջ արարեալ ղնոսա՝ ի Տափերական կամրջացն գետավէժ առնէին ղնոսա»[23]։

Տրդատ Մեծի ժամանակ Մեծամորի կամուրջը գտնվել է Արաքս և Մեծամոր գետերի հին հունների մերձեցման տեղում։ Մեծամոր գետը հնում հոսել է Վաղարշապատից (ուղիղ ճանապարհով) 5—6 կմ հարավ՝ Մեծամոր գյուղի արևելյան, Հայկաշեն գյուղի հարավ-արևմտյան մասերով, ուր և գտնվել է կամուրջը։ Նախարարներն անցնելով կամուրջը, Մեծամորի աջ և Արաքսի ձախ ափով (երկու գետերի միջով) շտապել են Արտաշատ, որը «ջրային» ճանապարհն է, իսկ «ցամաքայինը» Վաղարշապատ—Արտաշատ արքունի ճանապարհն է, որը չի հանդիպում Մեծամոր և Արաքս գետերին և անցնում է միայն Հրազդան գետով։ Ջրային ճանապարհը ցամաքայինից ավելի կարճ էր։

Մեծամոր գետը սկիզբ առնելով Այղր լճից և շրջակա աղբյուրներից՝ ընթանում է դեպի հարավ, ապա թեքվում արևելք, շարունակելով ընթացքը Էջմիածնից 10 կմ արևմուտք՝ Ապագա գյուղի հյուսիս-արևմտյան մասում իր մեջ է առնում Քասախ գետը և Վ. Խաթունարխի մոտով իջնում հարավ-արևելք։

Հնում Մեծամորը իր ստորին մասում հոսում էր Ն. Խաթունարխ, Հայկաշեն և Մեծամոր գյուղերի միջով, երկաթգծին զուգահեռ, ապա 3 կմ ներքև կտրում երկաթգիծը, ընթանում հարավ-արևելք, Մասիս կայարանից արևմուտք՝ Սարվանլար գյուղից հարավ իր մեջ էր առնում Հրազդան գետը, ապա հոսելով Արաքսին զուգահեռ՝ Մուղամ և Այդավան գյուղերի մոտով անցնում Շահումյան գյուղի հարավով, իր մեջ առնելով նաև Ազատ գետը, հյուսիսում շրջանցում էր Արտաշատի (Խորվիրապի) բլուրները և Արտաշատի արևելքում խառնվում Արաքսին[24]։ Մեծամոր գետի Երասխին զուգահեռ նախկին հունի հետքերը այսօր էլ կարելի է տեսնել Հայկաշենի և Արտաշատի միջև ընկած տարածությունում։

Խորենացու վկայությամբ, Վաղարշակ թագավորի ժամանակ (մինչև 140 թ.), Մեծամորը դեռևս իր հունը չէր փոխել. «...խաղայ իջանէ ի դաշտն մեծ, և անդ զափամբ մօրին մեծի բանակի ի տեղւոջ, ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի մօրն մեծ»[25]։

Խոսրով Բ թագավորի ժամանակ (287 թ.) ևս գետի հունը չէր փոխվել, այլապես հայ նախարարները Արտաշատ գնալիս չէին անցնի Մեծամորի (Վաղարշապատի) կամրջով։

Մեծամորի հունը չէր փոփոխվել նաև Տրդատ Գ թագավորի ժամանակ (330 թ.). դա երևում է Հռիփսիմեի և նրա ընկերուհիների սպանության առիթով Մեծամոր գետի հին հունի վրա գտնվող Վաղարշապատի (Մեծամորի) կամրջի հիշատակությունից։

Սեբեոսի վկայությամբ, արաբների՝ Դվինի վրա հարձակման ժամանակ (640 թ.) թե՛ Մեծամորի հին հունը և թե՛ նրա կամուրջը պահպանվում էին·

---

23 Նույն տեղում, էջ 28։

24 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 112, Ա. Շահնազարյան, Արտաշատի պատմա-աշխարհագրական տեսություն (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 4, Երևան, 1952, էջ 151—220), նույնի՝ «Սև ջրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղությունը նախկին դարերում» (ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», № 2, 1941, էջ 7—13), Հ. Եղիազարյան, Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրի շուրջը («Էջմիածին», № 3, 1956, էջ 29—35, № 4—5, էջ 73—81)·

25 Մ. Խորենացի, էջ 102։

նա գրում է. «... երբ արաբները «թափեցան յԱյրարատ։ եւ ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դրւին աւան. բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճապաղական՝ Թէոդորոս Վահևունի, և Խաչեան Առաւեղեան, և Շապուհ Ամատունի։ Որք գնացեալ փախստական ի Դրւին, և հասեալ ի կամուրջն Մեծամաւրի, ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալք գոյժ արկանել ի յաւանին»[26]։

«Աշխարհացոյցում» կարդում ենք. «եւ անցանէ (Հրազդան) յելից կուսէ Վաղարշապատ քաղաքի, յորում մայր եկեղեցեաց Կաթողիկէ, եւ մարտիրոսուհեացն մատրունքն, յորոց յելից բղխեն աղբեւրք Ասպահեն գետոյ, որ է խոզմաւր, եւ խառնի ի Մեծամաւր, եւ ապա յելից նորա գետն Ազատ, եւ արդարեւ ազատ. որոյ ակունքն բղխեն ի Գեղ լեառնէ, ի Սախուրակ տեղւոյ, որ իջանելով ընդ Դուին, ... եւ անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ. յորոց ի մէջ շինեալ է Արտաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակսն խառնուրդք Մեծամաւրի, իսկ այժմն փոխեալ ըզգնացսն Մեծամաւրայ՝ խառնի ի մտից կուսէ (Արտաշատու)»[27]։

Վաղարշապատից հարավ, Մեծամորի հին հունի ափերին, ներկայումս էլ պահպանվել են հելլենիստական և վաղ միջնադարյան ժամանակի բնակավայրերի հետքեր, նույն ժամանակի խեցեղենի մնացորդներով։ Նշանակում է մինչև հելլենիստական և վաղ միջնադարյան շրջանը Մեծամորը հունը չէր փոխել, իսկ VII դ. երկրորդ կեսում արդեն փոխել էր։ Վաղարշապատի հարավում Մեծամոր գյուղից հյուսիս, գետը հարավ-արևմտյան ուղղությամբ պատռել է հին հունը, կտրել Արաքսի շորացած հունը և հոսել է Մեծամոր գյուղի արևմուտքով, անցնելով Էջմիածին կայարանի հարավային կողմը, Արաքս գյուղի մոտով իջել է դեպի Խարաբա, Քյոլանլու և Ռնչպար գյուղերը և Արաքսին է միացել Արտաշատ քաղաքի արևմտյան կողմում՝ մոտ 30 կմ հեռավորությամբ։ Սա Մեծամորի ներկայիս հունն է։ Մեծամորն իր ստորին մասում փովում էր մինչև Հրազդանի ստորին հոսանքը[28], իսկ վերջինս անցնում էր Վաղարշապատի արևելյան կողմով։

---

26 «Սեբեոսի Պատմութիւն ի Հերակլն», Թիֆլիս, 1913. էջ 175։

27 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 111։

28 Հրազդան գետը նույնպես փոխել է իր ընթացքը։ Հնում Արարատյան դաշտում նրա մի ճյուղը հոսել է ներկայիս Ղուկասավան—Մասիս (Էյլազ) և Նեչրլու գյուղերի մոտով։ Ապա Մասիս և Ենգիջա գյուղերի դաշտում բաժանվել է երկու բազուկի, մեկը Նեչրլու գյուղի արևելքով հոսել է դեպի հարավ, իսկ մյուսը նույն գյուղի հյուսիս-արևելքով դեպի հարավ-արևմուտք, իջել է դեպի Զանգիլար գյուղը և Սարվանլար գյուղի հյուսիսում միացել գլխավոր հունին։

Հրազդան գետի գլխավոր հունը հոսել է Ղուկասավան—Զահմաթ գյուղերի միջով և Շորլու գյուղի արևելքով իջել հարավ։ Հետագայում գետի ընթացքը Շորլու գյուղի հյուսիսում պատռել է հին հունը և հոսել Դեմիրչի գյուղի հյուսիս-արևելյան կողմով, իջել Սարվանլար, իսկ ստորին մասում մինչև Մեծամորի գետախառնուրդին հասնելով, նորից ընթացել է հին հունով։

Կարելի է համոզված ասել, որ այս բոլոր հունները հնում գործել են միաժամանակ։ Առաջին հունի առաջին բազուկը, կլիմայի չորացման հետևանքով ցամաքել է նոր քարի դարի վերջում, իսկ երկրորդ բազուկը չարունակել է հարատևել մինչև պղնձի դարի սկիզբը, որից հետո այն նույնպես ցամաքել է (այդ մասին է վկայում հիշյալ ճյուղերի վրա գտնվող նոր քարի և պղնձի դարերի բնակատեղիներում կյանքի դադարեցումը)։ Պահպանվել է միայն Հրազդանի գլխավոր հունը, որը Սարվանլար գյուղի մոտ (երկաթուղու գծից հարավ) խառնվելիս է եղել Մեծամոր գետին։ Սակայն VII դարում (մ. թ.) վերջինիս հունի փոփոխվելուց հետո Հրազդանը առաջացրել է նոր հուն, որը ուղիղ գծով ընթացել է հարավ և միացել Արաքսին։

Արաքսը ևս հնում հոսել է Արարատյան դաշտի հյուսիսով, Վաղարշապատ քաղաքի արևմուտքից ու հարավից[29]։

---

29 Մովսես Խորենացու հաղորդմամբ, մոտ 2000 տարի առաջ, Արաքսը Արարատյան դաշտում ունեցել է մեկ այլ հուն և հոսել է Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արմավիրի մոտով, այնուհետև Արաքսի այս հունը ճեղքվել է և մ. թ. ա. II դ. սկզբին Արաքսը հեռացել է դեպի հարավ ու ցամաքել. «Յաւուրս սորա՝ փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն. քանզի էր հեռացեալ դեսն Երասխ, և յերկարել ձմերայնոն, և ի դառնահոտ հնչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ։ Ընդ որ նեղեալ Երուանդայ, ...փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս...» (Մ. Խ ո ր է ն ա ց ի, էջ 160—161)։ Հին Արաքսի այս հունը պահպանվել է Արմավիրի, Էջմիածնի և Արտաշատի շրջակայքում։ Արարատյան դաշտում պահպանվածները կոչվում են Արտաշարի ղորու և Ցամաք Արաքս (Ղուրու Արաղ), որոնք գտնվում են ներկայիս Արաքսի ձախ ափին, Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջաններում։

Այսպիսով, Արաքսի ներկա հունից բացի, Արարատյան դաշտում կան նաև երկու խոշոր ցամաքած հուներ, որոնք պահպանվում են մինչ այսօր։ Դրանցից հնագույնի ելքը սկսվում է Արմավիրի դաշտում՝ Շենավանից անցնում է Գետաշենի մոտերքով դեպի Նալբանդյան, ապա Արմավիրի ու Այգեշատի արանքով մտնում Արևիկ, թեքվում հյուսիս-արևելք և Մրգաշատ գյուղից ցած հետզհետե ընդլայնվում։ Արաքսի հին հունը Ղամշլու գյուղի մոտ անցնում է Հոկտեմբերյան, Էջմիածնի երկաթգծից հյուսիս, մոտենում է Սև ջրին, իջնում արևելք՝ դեպի Արտաշար, զուգահեռ ընթանալով Մեծամորի հունին, Վաղարշապատի հարավ-արևմուտքից անցնում է Ապագա, իսկ հարավից՝ Ջրառատ գյուղերով և Էջմիածնի կայարանի արևելյան կողմից թեքվում հարավ-արևելք, ապա Մեծամոր գյուղի արևմտյան կողմում կտրում է երկաթգիծը, անցնում հարավ՝ Մեծամորին զուգահեռ ընթանում դեպի Արաքս գյուղը։ Այս հունի ամենահյուսիսային կետի հեռավորությունը (ներկայիս Արաքսից Ղամշլու և Արտաշար գյուղերի մոտերքում) 8—10 կմ է։

Արմավիրի և Արևիկի դաշտերում Արաքսի հին հունի լայնությունը մոտ կես կմ է, որի (Արտաշարի ղորուի) մի ծայրը հասնում է Շենավան գյուղի մոտերքը, մյուսը՝ Մեծամոր լճից ներքև։ Այս հունը ունեցել է շատ մեծ աղեղ (Թ. Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 83—100)։

Երկրորդ հունը Ցամաք Արաքսն է (Ղուրու Արաղ), որն ընկած է Արմավիրից 2—3 կմ հարավ-արևելք։ Այն սկիզբ է առնում Ջանֆիդա և Փշատավան գյուղերի մոտերքից՝ աղեղնաձև թեքվելով դեպի գործուն Արաքսը, Տանձուտի, Արգավանդի արանքով իջնում Եղեգնուտ, ապա՝ Երասխահուն (Ղուրու Արաղ) և Էջմիածնից հարավ Արաքս գյուղի մոտ միանում առաջին հունին, գնում Արտաշատ։

Արտաշատը կառուցված է եղել Արաքսի այս երկրորդ հունի և Մեծամորի խառնարանի տեղում, Խորվիրապի բլրի մոտ, որը բավական հեռու է Արաքսի ներկայիս հունից և, ինչպես Խորենացին է վկայում, գտնվել է Մեծամորի և չորացած Արաքսի խառնարանի վրա. «երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամոր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ» (Մ. Խ ո ր է ն ա ց ի, էջ 173)։

Տանձուտի և Արգավանդի մոտերքում Ցամաք Արաքսի լայնությունը 1—1,5 կմ է։ Արմավիրի շրջանում Ցամաք Արաքսը (Ղուրու Արաղ) և Արաքսի հնագույն հունը (Արտաշարի ղորու) բավական մոտենում են միմյանց՝ մոտ 2—3 կմ հեռավորությամբ։ Մնացած տեղերում հեռավորությունը հետզհետե մեծանում է հասնելով մոտ 8—10 կմ-ի։

Արաքսի հին հուները բաժանվում են մի քանի վտակների և բազուկների, որոնք ցանցաձև կտրում են Արաքս ու Մեծամոր գետերի և Գետաշեն ու Ղամշլու գյուղերի (Այղր լճի) միջև ընկած տարածությունը։ Հիշյալ բոլոր հուները հնում միաժամանակ գոյություն են ունեցել։ Եվ սկսած նոր քարի ու պղնձի դարերից, մարդիկ բնակվել են նրանց ափին։

Արտաշատ մայրաքաղաքի մոտով անցնող Արաքսի երկրորդ հին հունի (Ցամաք Արաքս) ընթացքը փոխվել է մ. թ. IV դ.։ Գետը ցամաքելով հեռացել է Արտաշատից, և առաջացրել Արաքսի ներկա գործուն հունը։ Այս հունի փոփոխության հետևանքով, Խոսրով Կոտակի (331—338 թթ.) օրոք, արքունիքը և Արտաշատի բնակչությունը տեղափոխվել են Դվին. «Նա և

Այժմյան Վաղարշապատը բավական ընդարձակվել է դեպի հյուսիս-արևելք։ Հնում Հռիփսիմե վանքը հեռու էր «Հարուստ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ, ի տեղի մի յարևելս կոյս»[30]։ Վաղարշապատի դեպի Հռիփսիմե տարածումը կատարվել է հետագայում։

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ժամանակ Վաղարշապատ գյուղը կից էր 1627 թ. Մովսես կաթողիկոսի կառուցած Էջմիածնի վանքի պարսպին։ Սիմեոն Երևանցին նոր պարիսպ կառուցելիս (1766 թ.) գյուղը վանքի արևմտյան մասից տեղափոխում է հյուսիսային կողմը. «Ի շինելն զպարիսպ Սրբոյ Աթոռոյս զմերձ գեօղս մեր (որ կից և անմիջոց վայրօք և խառնիխուռն շինուածովք շրջափակեալ էր զսուրբ Աթոռովս) քակեալ հեռացոյց ի պարսպէս և յԱթոռոյս և իւրով արդեամբքն վերստին շինեաց զտունսն և զեկեղեցին ի հիւսիսակողմն միաժողով և բնակակից իրերաց՝ որպէս տեսանես»[31]։ Իսկ Աստվածածին եկեղեցու արձանագրությունից հայտնի է զառնում գյուղը տեղափոխելու թվականը. «Շինեցաւ Ս. եկեղեցիս, և հեռացաւ գէօղս յաթոռոյն ի շինել պարսպի նորին՝ արդեամբք և հրամանաւ տեառն Սիմէոնի Ս. կաթողիկոսին Երևանցւոյ... ի ՌՄԺԶ» (1777 թ.)[32]։

Վաղարշապատի հին պարսպի մնացորդները պահպանվել էին մինչև XIX դ.։ Դրա վկայությունն է Վաղարշապատի հատակագիծը[33] (նկ. 1)։ Այն հյուսիսում սահմանափակվում է Վաղարշապատ բնակավայրով, որը հասնում է մինչև Սամաղար գնացող խճուղու թեքությունը՝ Քասախ գետի շորացած հունից մեկ կիլոմետր ցած, չհասած Կավաբլրի նոր քարի, պղնձի և վաղ բրոնզի դարի բնակատեղին (աղյուսի գործարանի տեղում, Էջմիածնի հին սպանդանոցի մոտ)։ Արևելքում՝ հատակագծից դուրս են մնացել Հռիփսիմե, Շողակաթ վանքերը և հանգած եկեղեցին։ Հարավ-արևմուտքում քաղաքի սահմանը չի հասել Գայանե վանքին, իսկ արևմուտքում այն ձգվում է մինչև հոգևորականների գերեզմանոցը։ Գայանե վանքից արևելք նշված է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ձգվող հողապատնեշի տեսքով բարձունք։ Դատելով նրա լայն հիմքից և բավական երկար ձգվածությունից (պարսպի երկարությունը մոտ մեկ կմ է), կարելի է հավաստել, որ այն քաղաքի արևելյան և հարավային

ղարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալս որ ...Դուին կոչի... Քանզի ի ժամանակին յայնմիկ... օդք ջերմայինք պղտորեալք ժանգահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատ բնակեալ էին, կամաւ յանձն առին զփոփոխումն» (նույն տեղում, էջ 262)։

Ղազար Փարպեցու վկայությամբ Վահան Մամիկոնյանի ժամանակ (V դ. վերջ), Արտաշատի հայտնի կամուրջը (Տափերականը), հավանաբար Արաքսի հունի փոփոխության պատճառով, ավերվել էր. «... զկամուրջն Արտաշատու գտին աւերեալ... Իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան մերձեալ ի տեղի մի յեզր գետոյն, ... իջանէր ի գետն, և որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ անցանէր խաղաղութեամբ ընդ ջուրսն» (Ղ. Փարպեցի, էջ 377—378)։

30 Ադաթանգեղոս, էջ 103։

31 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 36—37։

32 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Դ, «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», Ս. Ա. Թիֆլիս, 1894, առաջաբանը, էջ ՁԹ, Ալիշան, Այրարատ, էջ 209, Ա. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 72—73։

33 О. Х. Халпахчьян, Композиционные особенности планировки оборонительных сооружений Армении («Архитектурное наследство». 19, М., 1972, стр. 148, 149, рис. 2, Вагаршапат, план 1827 г.).

սահմանը պաշտպանող ամրոցի կառույց է եղել։ Հատակագծում նշված բարձունքի լայնությունը նկատի ունենալով կարելի է ենթադրել, որ դրանք քաղաքի պարսպի մնացորդներն են։ Հավանաբար, այս բարձունքը լատինական արձանագրությունների մեջ հիշատակվող հռոմեացիների հիմնադրած պաշտպանական մեծ պարսպի մի մասն է[34]։ Այս պատնեշի մասին հիշատակություն կա նաև Հ. Շահխաթունյանցի մոտ. «Փոքր ինչ նշմարին հիմունք պարսպի



Նկ. 1. 1827 թ. Վաղարշապատի գլխավոր հատակագիծը։

նորա յարևելյան կողմն կաթուղիկէ տաճարին Սրբոյ, հեռու այժմեան արտաքին պարսպէ իբրև ըռմբաձիգ մի հրացանից, որոյ և երկայնութիւնն ի հիւսիսոյ ի հարաւ գտանի իբրև եօթն հարիւր յիսուն քայլ և ի միշին տեղւոջ երկայնութեանն ունի և զնշան տեղւոյ դրանն արևելեան, զոր «Արեգ դուռն» անուանէին. և հարաւային ծայր հիմանս այսօրիկ հայի ուղղակի ընդ մէջ մեծի կաթուղիկէին և մենաստանին Գայիանեայ կուսի, որով պարիսպն առնու ի մէջ իւր զտեղին գործարանի թղթաշինութեան. իսկ հիւսիսային ծայրն առա-

[34] И. А. Бартоломей, Две классические надписи, найденные в Закавказском крае в 1863 г. и 1867 г. («Известия географического общества», Тифлис, 1867. стр. 1 и сл.); И. Помяловский, Сборник греческих и латинскнх надписей Кавказа, 140, СПб., 1881, стр. 72—73; М. И. Ростовцев, Новые латинские надписи с юга России, надпись из Эчмиадзиа («Известия археологической комиссии», вып. 33. 1909, стр. 1—19 и сл.).

ջացեալ յարևմուտս ունի զհայեցուած իւր ի գիւղամէջ անդր. ուստի այս ձև հիմանց պարսպին կացուցանելն՝ ցուցանէ զբերդն շինեալն ի Վաղարշակայ երկար քառանկիւնի յարևելից յարևմուտս»[35]։ Այսպիսով Վաղարշապատի արևելյան պարսպի տեղը ևս որոշվում է։

Կաթողիկե եկեղեցուց 500 մ հարավ, Իգդիրի խճուղուց աջ, ճեմարանի յսարանի, հանրակացարանի և մանկապարտեզի շենքերի մոտերքում, ինչպես վերևում ասվեց, այդ պարսպի հետքերը պահպանվել են մինչև 1945 թ.։

Վաղարշապատի գլխավոր հատակագծում պաշտպանական պարսպի առկայությունը վկայում է ոչ միայն Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունների և լատինական արձանագրությունների հիշատակությունների ստուգությունը, այլև ճշգրիտ կերպով որոշում է քաղաքի հին դիրքը արևելյան, արևմտյան, հարավային և հյուսիսային կողմերում։ Այսինքն՝ քաղաքը XIX դ. կեսին, գտնվել է Գայանե վանքից հարավ-արևելք։

Այսպիսով, պարզվում է, որ Վաղարշապատի հարավային սահմանը անցնում էր Գայանե վանքի արևելքով և Իգդիրի խճուղու աջ կողմով (այժմյան Շահումյան և Կամոյի փողոցների հատման տեղից արևմուտք), ուր և գտնվել է հարավային գուռը։ Արևմտյան սահմանը ձգվում էր Իգդիրի խճուղուց դեպի ներկայիս Կոմունարների փողոցը, մանկապարտեզի և աստղադիտարանի շենքերի մոտով դեպի էջմիածնի լիճը։ Արևմտյան պարսպից դուրս են մնում Գայանե վանքը, քաղաքի արվարձանները և հոգևորականների գերեզմանոցը։

Մինչև վերջին տարիներս էջմիածնի վանքը գտնվում էր Վաղարշապատի հարավային կողմում և վանքից հարավ բնակություն չկար։ 1777 թ. առաջ քաղաքը վանքը շրջապատում էր բոլոր կողմերից։ Բնակելի տներ ու թաղեր կային ոչ միայն հյուսիսում, այլև հարավում, վանքի արևմտյան պարիսպների մոտ, արևելքում՝ տպարանի և ճեմարանի տեղում, արևմուտքում՝ նոր վեհարանի շրջակայքում։ Հավանաբար, հնում էլ այդպես է եղել։ Վաղարշապատը բավական ընդարձակ տարածություն է ընդգրկել[36]։

Պատմական Վաղարշապատի տեղադրությունը (գրված տարածություն) մոտավորապես համընկնում է 1940-ական թթ. էջմիածնի տարածքի հետ։

Կարևոր են նաև Վաղարշապատի ճանապարհների ուղղությունները. Վաղարշապատ—Արտաշատ արքունի ճանապարհը անցել է Վաղարշապատի հարավ-արևելյան մասով, Ղոշակոնդ կոչված երեք բլուրների մոտով, որոնցից առաջինում հայտնաբերվել է հելլենիստական ժամանակի խեցի։ Գտնվել են նաև թեավոր խաչի թև (VI դ.) և վաղ միջնադարին բնորոշ աղյուսներ՝ կրի շաղախի հետ։ Հավանաբար, այս բլուրը իշևանատան կամ փոստի դեր է կատարել։ Այստեղից արքունական ճանապարհը իջել է Զվարթնոցից հարավ-արևելք (Չորրորդ սովխոզից հարավ գտնվող ավազաբլուրների վերջավորությունը) և ճահճուտ հարթավայրի միացման տեղից թեքվել դեպի Զորանքյարա գյուղը, սրա հյուսիսից անցել է Ղարաղշլաղ գյուղով, ապա Դեմիրչի, Ռահիմաբադ գյուղերի արանքով իջել Սարվանլար և անցել Հրազդան գետի կամրջով (գյուղի հյուսիսում պահպանվել են կամրջի պատերը)։ Այստեղից արքունական ճանապարհը Մասիս կայարանի հարավ-արևելքով գնացել է Ար-

35 Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրություն հինգ գավառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. 1, էջ 79—80, Ա. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 62—65։

36 Թ. Ավգալբեկյան, նշվ. աշխ., էջ 149։

տաշատ։ Ամբողջ ճանապարհի երկայնքով կան հելլենիստական ժամանակի բնակավայրերի մնացորդներ։

Վաղարշապատ—Արմավիր ճանապարհը սկիզբ առնելով քաղաքի հարավային դռնից, իջել է Էջմիածնի հարավում գտնվող ավազի բլուրների շարքից ցած։ Մոխրաբլրից մոտ մեկ կիլոմետր հյուսիս թեքվել է աջ, անցել Քասախ գետի կամրջով, որտեղ մինչև օրս պահպանվում են կամրջի հետքերը։ Դեպի արևմուտք շարունակվելով Աթարբեկյան և Քյոլանլու գյուղերի սահմանագծով, որտեղ պահպանվում են հելլենիստական ժամանակի բնակավայրի և դամբարանադաշտի հետքեր, ճանապարհը անցել է Լենուղի գյուղի հարավով։ Այստեղ նույնպես կան հելլենիստական, միջնադարյան բնակավայրերի հետքեր, բազալտե ու տուֆե սյուների հղկված պատվանդաններ ու սրբատաշ քարերից պատրաստված ջրի փոքրիկ ավազանի մնացորդներ։ Ապա ճանապարհը Կղզյակ բլրի հյուսիսով անցել է Քասախ և Մեծամոր գետերի խառնարանից ներքև գտնվող Մեծամորի կամուրջը և Ապագա գյուղի հյուսիսով, Արտաշար, Ղամշլու, Արևիկ գյուղերով մտել է Արմավիր։

Հնագիտական տվյալները և մատենագրական աղբյուրները օգնում են նաև որոշելու Վաղարշապատի տարածքի սկզբնական բնակեցման և նրա կյանքի տևողության հարցերը։

Վաղարշապատն իր շրջակայքով բնակեցված է եղել շատ հեռավոր անցյալում, սկսած առաջին նստակյաց կյանքի անցած մարդու պատմության ամենավաղ ժամանակից։ Այդ են վկայում Վաղարշապատի սահմաններում պահպանված նոր քարի և պղնձի դարերի բնակատեղիները, քաղաքի հյուսիսում՝ Կավաբլրի նոր քարի դարի բնակատեղին (մ. թ. ա. VI—IV հազարամյակ), արևելքում՝ Շրեշ-բլրի պղնձի դարի բնակատեղին (մ. թ. ա. IV—II հազարամյակ) և բրոնզի դարի դամբարանները (մ. թ. ա. II—I հազարամյակ)[37]։

Վաղարշապատի շրջանը և Վաղարշապատը բնակեցված են եղել նաև Ուրարտական պետության ժամանակ (մ. թ. ա. VIII—VII դդ.)։ Վերջինս հավաստվում է Զվարթնոցում գտնված Ռուսա II թագավորի սեպագիր արձանագրությամբ, որը հաղորդում է Իլդարունի (Հրազդան, հնարավոր է նաև Քասախ) գետից Կուարլինի Խուբի (Հուվի) հովտում (դաշտում), հետագա քաղաքադաշտում (Վաղարշապատի դաշտում) ջրանցք անցկացնելու, պտղատու և խաղողի այգիներ տնկելու, դաշտեր մշակելու, նոր քաղաք կառուցելու մասին[38]։

Հայտնի է, որ մ. թ. VII դ. Զվարթնոց եկեղեցու կառուցող Ներսես Շինարարը նույնպես Վաղարշապատի (Զվարթնոցի) շրջապատի ոռոգման համար Քասախ գետից ջուր է բերել. «Ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն 'ի գործ արկաներ, տնկեր այգիս և բուրաստանս ծաղկոցաց»[39]։

Զվարթնոցի հիշյալ արձանագրությունը, հավանաբար, բերվել է Վաղարշապատ քաղաքի կենտրոնական մասից, Էջմիածնի վանքի մոտից, որտեղ վաղ հայկական շրջանում եղել է բնակատեղի, որը, ըստ երևույթին, ունեցել

---

37 Ս. Հ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 144, 153, 191—193։

38 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 213—214, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи. Тбилиси, 1960, стр. 281.

39 «Յովհաննու Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 88։

է Անահիտ (Արտեմիդ) աստվածուհուն նվիրված հեթանոսական տաճար։ Այդ են վկայում վանքի բեմի տակից վերջին տարիներս գտնված, կրակի պաշտամունքի հետ կապված, կավե կրակարանի մոխրի մնացորդները և Զվարթնոցի քարակոթողի տիպի առանց արձանագրության կոթողը։

Արտեմիդ քաղաքի և Վարդգեսավանի անունները կապված են հեռավոր անցյալի հետ։ Ինչպես հաղորդում է Մ. Խորենացին, Վաղարշապատը հնում (վաղ հայկական շրջանում) կրել է Արտեմիդ անունը։ Վարդգես մանուկը հեռանալով Տուհաց (Տուխերի) գավառից, Քասախ գետի վրայով գալիս հաստատվում է Շրեշ բլրի Քասախ գետի մոտ գտնվող Արտեմիդ քաղաքում, փեսայանում Երվանդ արքային և հիմնում է իր անունով ավանը[40]։

Քասախ գետը սկիզբ առնելով Արագածի ստորոտից, հոսում է հին Նիգ (Ապարան) գավառի միջով և հյուսիսից իջնելով հարավ, մտնում Արարատյան դաշտը, անցնելով Վաղարշապատի արևմուտքով, թափվում է Մեծամոր գետը, իսկ վերջինս էլ՝ Արաքսը։ Տուհաց գավառը, Գր. Ղափանցյանի կարծիքով, կարող էր գտնվել միայն Ապարանից այն կողմը, հետևապես Արագած սարից դեպի հյուսիս։ Այդ ճանապարհը (Արարատյան դաշտավայրից դեպի ներկայիս Փամբակի և Լենինականի շրջանը տանող) հայտնի էր դեռևս հնուց, որն այժմ էլ ծառայում է որպես գլխավոր ճանապարհ։ Տուհաց գավառում Գր. Ղափանցյանը նկատի ունի Տուհ (Տուխ) Etiuxi—Etiuni սկզբնապես խոշոր ցեղ, իսկ հետագայում նաև խոշոր ցեղային միություն։ Ուրարտական արձանագրություններում այդ անվան տակ, հավանորեն, հասկացվել է մանր շրջանների ցեղերից կազմված ցեղային մեծ միություն, որոնք եղել են ուրարտացիների ամենաուժեղ հակառակորդները[41]։

Բ. Ա. Տուրաևը այսպես է բնորոշում Էթիունի երկրի քաղաքական նշանակությունը. «Սարիղամիշի արձանագրության մեջ Արգիշտին խոսում է Էթիունի երկիրը գրավելու մասին— այդ անունը հավանորեն ընդհանուր է եղել այն մարզի համար, որը համապատասխանում է Անդրկովկասի հարավային մասին (Հյուսիսային Հայաստանին— Ս. Ս.)»[42]։

Վարդգեսի ցեղի մասնատվելը (Տուխերի (Էթիունյան) ցեղերի բաժանվելը), նրա բարեկամանալը հայկազյան առաջին թագավորներից Երվանդ Ա-ի (մ. թ. ա. VI դ.) հետ արտացոլում է Հայկական լեռնաշխարհի ցեղերի միավորումը և հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը[43], Երվանդյանների՝ առաջին հայկազյանների գլխավորությամբ։ Այդ է վկայում նաև Հայկի Բաբելոնից հեռանալու, ինչպես նաև Սանասարի ու Բաղդասարի սեմական աշխարհից գաղթելու մասին եղած հայ ժողովրդական ավանդությունը[44]։

Վաղարշապատի հին տեղը սկզբնապես Արտեմիդ կոչվելը կապվում է հունական Արտեմիս դիցուհու անվան հետ։ Դեռևս Սելևկյանների և Երվանդյանների ժամանակ, հելլենիզմի ազդեցությամբ, Հայաստանում տեղի է ունեցել կրոնների մերձեցում և հայ հեթանոսական աստվածները միաձուլվել են հունականի հետ։ Հայկական Անահիտ աստվածուհին փոխարինվել է Արտե-

40 Մ. Խորենացի, էջ 198։

41 Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении («Научные труды», т. XIV, Ереван, 1940, стр. 332, 333).

42 Б. А. Тураев, История древнего Востока, т. 11, Л., 1936, стр. 35.

43 Գր. Կապանցյան, նշվ. աշխ., էջ 333։

44 Մ. Խորենացի, էջ 35, 72։

միդով։ Հետևաբար, Վաղարշապատի հին անունը կարող է կոչված լինել Անահիտ աստվածուհու անվամբ և հետագայում, հելլենիզմի ազդեցությամբ, փոխարինվել Արտեմիդով։ Իսկ Անահիտի պաշտամունքին նվիրված տաճարներ կային Հայաստանի շատ վայրերում։ Սարաբոնը իր աշխարհագրության մեջ պատմում է, որ «Հայերն իրենց երկրի զանազան տեղերում հիմնված ունեին մեհյաններ ի պատիվ Անահիտ դիցուհու»[45]։

Մ. Խորենացու վկայությամբ՝ Արտեմիդը (Վարդգեսավան, հետագայում Վաղարշապատ) խոշոր ավան էր դեռևս Արշակունիների Հայաստանում հաստատվելուց շատ առաջ. «Թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէիցն նստուցեալ ՝ի յԱրմաւիր և ՝ի յաւանին Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ»[46]։ Հավանաբար Վարդգեսավանը գոյություն ուներ նաև Երվանդյանների (ըստ Խորենացու՝ առաջին Հայկազյանների, VI—II դդ. մ. թ. ա.) և Արտաշեսյանների (II—I դդ. մ. թ. ա.) ժամանակներում։

Այնուհետև Խորենացին ավելացնում է. «Այս Երուանդ՝ առաջինն է Սակաւակեացն, որ ի Հայկազանց զորոյ զքոյրն կին առեաւ Վարդգէսի, շինեաց դաւանս զայս»[47]։ Ուրեմն Երվանդ Սակավակյացը վիպական Հայկազյան Տիգրանի հայրն է, խարտյաշ և մազերը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ Տիգրան Մեծը։ Տիգրան Բ-ի (միջինի) ժամանակ Վարդգեսավանը վաճառաշահ ու շեն քաղաք էր, որտեղ, Խորենացու վկայությամբ՝ «...Տիգրան միջին յարշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից, որ եղև քաղաքագեղ վաճառօք»[48]։

Ստացվում է, որ ավանը կառուցվել է Տիգրան Մեծի հոր ժամանակ, հետո Տիգրանը այնտեղ է բնակեցրել հրեաներին, իսկ Երվանդն ու Տիգրանը հայր և որդի են։ Սակայն, իրականում, Երվանդ անունով Արտաշեսյան թագավոր հայտնի չէ[49]։

Վաղարշապատի հետագա պատմությունը սերտորեն կապվում է ոչ միայն հելլենիստական, հռոմեական, այլև պարթևական ժամանակաշրջանի հետ։

Սանատրուկի որդի Վաղարշ Ա Արշակունի թագավորը (117—140 թթ.) Վարդգեսավանը պարսպապատեց, կոչեց Վաղարշապատ, դարձնելով թագավորանիստ քաղաք (մայրաքաղաք) և մինչև Արշակունիների թագավորության վերջը այն մնաց որպես մայրաքաղաք։

Սրանից կարելի է ենթադրել, որ Վարդգեսավանը ընդարձակվելու հետևանքով, Վաղարշ թագավորի կողմից կարող էր նորից պարսպապատվել որպես քաղաք, ինչպես վկայում է նրա Վաղարշապատ անվանումը։ Դեռևս Երվանդյանների ժամանակ գոյություն ունեցած Վարդգեսավանը, հավանաբար, արդեն քաղաք էր և Երվանդաշատի ու Արմավիրի նման շրջապատված էր պարսպով։ Պարսպապատված է եղել նույնիսկ Վաղարշապատի սկզբնական կորիզի՝ Շրեշ բլրի (մ. թ. ա. III հազարամյակ) էնեոլիթի բնակատեղիի միջին պղնձի դարի շերտը (III շերտ), որի զանգվածային քարով շարվածքի մնացորդները պահպանվել էին մինչև 1950 թ.։

---

45 Strabon, XI, 532, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, 1944, էջ 104, Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 381։

46 Մ. Խորենացի, էջ 124։

47 Նույն տեղում։

48 Մ. Խորենացի, էջ 74։

49 Նույն տեղում, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, 1966, էջ 129։

Մեծ է եղել Վաղարշ թագավորի դերը քաղաքաշինության գործում։ Վաղարշը, գրում է Մ. Խորենացին. «...պատեաց պարսպաւ և զՀզոր աւանն Վարդէսի, որ ի վերայ Քասախ գետոյ... պատեաց պարսպաւ և Հզոր պատուարաւ. և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»[50]։

Վաղարշապատը կոչվել է նաև Նոր քաղաք (Կայնոպոլ), քաղաքաղաշտ։ Փարպեցին վեց անգամ գործ է ածում Վաղարշապատ, չորս անգամ՝ Նոր քաղաք անվանումը[51]. «...վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր քաղաք անուանեն»[52],

Ասողիկը գրում է. «...մեծ վարդապետն Հայոց Մեսրոպ վախճանեցաւ ի Քաղաքաղաշտի ի Վաղարշապատ»[53]։ Կորյունը նույնպես Վաղարշապատի փոխարեն չորս անգամ գործ է ածում Նոր քաղաք անունը[54],

Հայ-հռոմեական պատերազմից և Ստատիոս Պրիսկոսի, ապա Մարտիոս Վերոսի (164 թ.) կողմից հայերի ապստամբությունը ճնշելուց հետո քարուքանդ եղած Արտաշատի փոխարեն Հայաստանի մայրաքաղաքը դարձավ Կայնոպոլը (Նոր քաղաքը)[55]։ Նոր մայրաքաղաքում կայազոր պահելը ուներ իր ներքին պատճառը և քաղաքական նկատառումները, որը պայմանավորված էր հայ ժողովրդի հռոմեացիների նկատմամբ ունեցած հակակրանքով։ Թերևս այդ ձևով հռոմեացիները ուզում էին ժողովրդին մոռացնել տալ Արտաշատ մայրաքաղաքը, որպես ազատ Հայաստանի խորհրդանիշ[56]։ Երևի այդ էր պատճառը, որ հռոմեացիներն իբրև իրենց կայազորի նստավայր սկսեցին պարսպապատել Հայաստանի նոր մայրաքաղաքը։

Միանգամայն հավանական է, որ հռոմեական կայազորը գրավել էր բնակատեղիի ամրացված մասը և քաղաքը պարսպով շրջապատելով այն վերափոխել բերդաքաղաքի։ Այդ են վկայում 1863 և 1907 թթ. Վաղարշապատում (Էջմիածնի ճեմարանի լսարանի և հանրակացարանի մոտից), քաղաքի հարավային պարսպի մուտքի մոտից գտնված լատիներեն երկու արձանագրությունները, որոնք վերաբերում են քաղաքի պարսպին ու մուտքին։ Երկրորդ արձանագրությունը թվագրվում է 175 թ.։ Արձանագրությունը շինարարական է, պատմում է քաղաքի պաշտպանողական պարսպի մասին, որը կառուցել են Կապադովկիայից բերված հռոմեական լեգեոնները՝ ներկայիս Էջմիածնի տեղում։ Այդ է վկայում նաև մյուս շինարարական արձանագրությունը, որը թվագրվում է 185 թ.։ Ուրեմն, քաղաքի պարիսպների 175 թ. սկսած շինարարությունը չէր ավարտվել դեռևս 185 թ.[57]։ Ակներև է, որ դա խոշոր և հաստատուն

---

50 Մ. Խորենացի, էջ 199—200։

51 Ղազար Փարպեցի, էջ 8, 24, 60, 311, 389, 407,

52 Նույն տեղում, էջ 77։

53 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 77։

54 Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Թիֆլիս, 1913, էջ 27, 39, 62։

55 Հ. Մանանդյան, Պատմական աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 37, 44։

56 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, стр. 233, 262—267.

57 М. И. Ростовцев, Новые латинские надписи с юга России, надпись из Эчмиадзина, «Известия археологической комиссии», выпуск 33, 1909, стр. 1—19; И. А. Бартоломей, նշվ. աշխ., И. Помяловский, նշվ աշխ.։

կառուցվածք էր։ Նշված արձանագրությունները միաժամանակ ապացուցում են, որ հռոմեական ջոկատը տեղավորված է եղել Էջմիածնում, որպես քաղաքի մշտական կայազոր։

174 թ. Վաղարշապատ քաղաքի տեղում եղել է հռոմեական ամրություն, բերդ և Կապադովկիայի տրիբունի հրամանատարությամբ հռոմեական զորք։ Հայաստանին տիրելու համար հռոմեացիները ավելի են ամրացնում իրենց տիրապետությունը արևելյան գավառներում։ Ասորիքից բերվում են օժանդակ զորքեր, և կառուցվում են հաղորդակցության ճանապարհներ, ամրություններ։ Այս միջոցառումների նպատակն էր Հայաստանը շրջապատել Հռոմի և Հռոմի վասալ թագավորների զորքերով։ Եվ Հռոմը կարողացավ ժամանակավորապես տիրել Հայաստանին. Մարկոս Ավրելիոսի օրոք Կապադովկիայից Վաղարշապատ բերվեցին ֆուլմինաթա XII և ապոլլինարյան XV լեգեոնների երկու ջոկատներ։ Հայաստանի հսկողությունը, հավանաբար, հանձնվել էր այս լեգեոններին։

Արձանագրության մեջ հիշատակված ֆուլմինաթա XII և ապոլլինարյան XV լեգեոնները հետաքրքիր խորհրդածությունների տեղիք են տալիս։ Հայտնի է, թե ինչ դեր էր խաղում ապոլլինարյան XV լեգեոնը քրիստոնեության տարածման գործում։ Մ. Ավրելիոսի արշավանքներին վերաբերող կոթողի վրա նշված է սեբաստական քառասուն նահատակ քրիստոնյա զինվորների անունները։ Լիցիայի ժամանակ Ասորիքի լեգեոնը վաղուց արդեն իր շարքերում հաշվում էր նշանակալից թվով քրիստոնյաներ։ Այդ պատճառով լեգեոնը 70-ական թթ. փոխադրեցին Կապադովկիա։

Անհրաժեշտ է նշել նաև այն դերը, որ կարող էր խաղալ այդ լեգեոնը Հայաստանի քաղաքական և կրոնական կենտրոնում, դեռևս II դ. վերջերում, քրիստոնեություն տարածելու գործում։ Այդ լեգեոնի նոր քաղաք ժամանելու թվագրությունը նշված է Վաղարշապատում գտնված արձանագրության մեջ։ Պարթևական կռիվների տարիներին Դանուբի լեգեոնները կռվում էին Հայաստանում՝ Եփրատի մոտ։ Ուստի, Դանուբի զորքերը Կապադովկիա կարող էին փոխադրվել 174—175 թթ.։ Եվ ապոլլինարյան XV լեգեոնի զինվորները հենց այդ ժամանակ էին փոխադրվել Հայաստան[58]։

Հին Վաղարշապատի պատմության համար կարևոր է նաև 1914 թ. հայտնաբերված հունարեն արձանագրությունը[59], գրված 165 թ. (մ. թ. II դ.) հռոմեական օկուպացիոն բանակի կայազորի առաջին հրամանատարներից մեկի՝ զինվորական տրիբուն Էլիոս Վալենտի կողմից։ Արձանագրությունը գտնվել է Էջմիածնի առուն փորելու ժամանակ՝ Հռիփսիմեի և Զվարթնոցի միջև ընկած հին քաղաքի դամբարանադաշտում։

Վաղարշապատի 185 թ. արձանագրության երկրորդ տողում միապետի (կայսր Կոմոդիոսի) անունը քերված, ջնջված է։ Հայտնի է, որ 192 թ., պարթևների պատերազմում Կոմոդիոսի սպանվելուց հետո, հռոմեական սենատը որոշեց նրան մոռացության մատնել։ Եվ ահա 193 թ., երբ Հայաստան է հասնում սենատի որոշումը, վերոհիշյալ արձանագրության միջից նրա անունը հան-

---

58 М. И. Ростовцев, նշվ. աշխ., էջ 1, 5, 19։

59 М. И. Ростовцев, Новая греческая надпись из Эчмиадзина («Христианский Восток», т. III, вып. 3, СПб., 1915, стр. 243—248).

վում է։ Էլիոս Վալենտի 165 թ. հունարեն արձանագրությունը, ինչպես նաև երկու լատինական արձանագրությունները, վկայում են, որ Հայաստանում հռոմեական օկուպացիան շարունակվել է նաև 175 թ. Մարկոս Ավրելիոսի և 185 թ. Կոմոդիոսի օրոք։ Հետևաբար, հռոմեական զորքերը Հայաստանում էին գտնվում 163—193 թթ.՝ երեսուն տարի[60]։

Խոսրով Ա-ի (196—216 թթ.)[61], ապա Տրդատ Գ-ի ժամանակ (298—330 թթ.), կապված քրիստոնեության տարածման հետ, պատմիչները բազմիցս հիշատակում են Վաղարշապատ մայրաքաղաքը[62]։

387 թ. Վռամշապուհի օրոք (387—414 թթ.), Հայաստանը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանվելուց հետո, Վաղարշապատը շարունակում էր մնալ որպես մայրաքաղաք և ապրում էր մշակութային վերելք (այստեղ կատարվեց հայերեն տառերի գյուտը)։ Արշակունիների թագավորությունից հետո, Վաղարշապատը վերջին հարվածը ստանում է պարսիկներից։

Սկսած 451 թ. Վարդանանց պատերազմի ժամանակից Վաղարշապատը ամայանում է և բնակչությունը ցրվում է Հայաստանի այլ վայրերը, իսկ պետական վարչական կենտրոն է դառնում Դվինը[63]։

МЕСТОРАСПОЛОЖЕНИЕ ДРЕВНЕГО ВАГАРШАПАТА ПО ДАННЫМ АРХЕОЛОГИИ И ИСТОРИОГРАФИИ

С. А САРДАРЯН

Резюме

Обнаруженные в Вагаршапате (Эчмиадзин) археологические данные и армянские письменные источники дают возможность определить местоположение города и осветить вопросы первичного заселения и продолжительности жизни на его территории.

Так, до последних времен еще в северной части города, на Каваблуре, сохранилось поселение нового каменного века (от VI—IV тысячелетий до н. э.), на северо-востоке—шрешблурское поселение медного века (IV—III тысячелетия до н. э.), на востоке—могильники эпохи бронзы (нач. II— нач. I тысячелетий до н. э.). Помимо того, обнаруженная в Звартноце урартская клинообразная надпись VII в. до н. э., затем на-

---

60 С. А. Жебелев, Греческая надгробная надпись из Вагаршапата. Աշխ Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Հավելված, 1931, էջ 81, К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 251—270։

1968 թ. Վաղարշապատի դամբարանադաշտից գտնվել է լատիներեն մի այլ արձանագրություն, որի մեջ հիշատակվում է (Ասորիքից բերված) սկյութական IV լեգեոնի շտաբը։ Այդ լեգեոնի մասին հիշատակություն կա նաև Արտաշատ մայրաքաղաքի տարածքում գտնված Տրայանոս կայսեր 114 թ. արձանագրության մեջ։ (Ռ. Թորոսյան, Ս. Կրկաշարյան, Հնագիտական նորություններ էջմիածնից, ՊԲՀ, 1971 թ., № 4, էջ 286—290)։

61 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 59—60։

62 Ագաթանգեղոս, էջ 24—28, 71—87, 395—444։

63 Ղ. Փարպեցի, էջ 311, 346, 390։

ходки римских монет царя Веспасиана или Тита (69—79 гг., 79—81 гг.) из могильников на Анаснатах-блур, а также монет Септимия-Севера в южной части города (193—211 гг.) и двух латинских надписей (175, 185 гг.) вблизи общежития бывшей Эчмиадзинской духовной семинарии и греческой надписи II в. из могильника проливают свет на множество вопросов.

И, наконец, письменные упоминания армянских историографов об истории древнего города Вардгесавана-Вагаршапата свидетельствуют о том, что он на протяжении всей своей истории никогда не оставался необитаемым.

Заселение территории Эчмиадзинского района и г. Вагаршапата насчитывает около 8000 лет—с VI тысячелетия до н. э. по настоящее время.